

## ԵԵՐՈՒՆԻ ՀԱՅՆ.

Անտէրունչ խեղմիկ տանս մէջ վայր ընկած,  
Մահուան մահմում անդագար զնդերփում եմ,  
Արդէն օրս է հասել՝ հոդիվար եղած,  
Շունչ կարճացել, ո՛ն խիստ մաշվում եմ:

Եերութեան վիշտը հէրիք չէ սրտիս,  
Անդութի սուրն էլ մր կողմից խոցել.  
Խարդախ յոյսերով շատացած գերիս . . .  
Խոր մժածմաւնքով ուշո ցնորուել:

Կարօս եմ — կարօս հմտւա բժշկի,

Որ գեղ պատրաստէ վէրքիս դնելու.

Հայն չունի բժիշկ, եւ ոչ զեղ յուսալի.

Նա բաւական է դեղով պառաւի:

Չունիմ գաւաղան, որ ծեռս բռնեմ,  
Յատի կանդնելով դէպ յառաջ զնամ,  
Աւժա ի կորուստ մատնուած տեսմեմ,  
Խե՞ղմ եւ ցաւակոծ անշարժ կմնամ:

Ու՞ր են քաջ որդիրս եւ ուր իմ թոռներ,

Ու՞ր չընաղ հարսունք՝ օրիորդը շքեղ,

Ու՞ր այն առագաստ՝ հարսանցն սիրաբեր.

Քոլորից զիկուած, աւա՞ղ՝ անմեղ տեղ:

Հեռու ցիր ու ցան որդիրս սիրազզեաց,  
Վ անուած, հայածուած ամեն մի անկիւնում,  
Որը զերի է շղթայով կապուած,  
Որը խոր մահուան գերեզման ննջում:

Ամանը կենդանի օտար սահմանում,

Խնդում եւ բերկում առօրեալ կենոր,

Դէպ ի դառ վիճակը ուշ չնն գարճնում

Արդիական սերտ սիրալիք աչօր:

Ասկի արծաթս ցեցի կերակուր,

Ուր եւ զրահներս ամեն ժամկուած,

Ցուպա ծերութեան կործանած ի կոր,

Ցորդ եւ իրաւունք վաղ ծրապուրուած:

Խարշատած սրտից հուր է բորբորում՝

Եր որ յիշում եմ մանկութեան օրերս,

Ցամրած ոսկերքից արիւն է կաթում՝

Եր որ չնմ տեսնում հարագատ զաւկներս:

Օրերս է տրտում! անծ վիրապից,

Արեւս է խաւար, լուսին ամպապատ,

Զնիմ զօրում նայել երկինք աստղալից,

Եւ պարզել մեռներս զողդոջուն աղատ:

Ու՞ր իմ բազմամարդ սիրուն բաղաբներ,

Արմաւիր, Գույն, Անին, Արտաշատ.

Ու՞ր իմ բերկրառիթ ծաղկազարդ լեռներ,

Ծաղկոտ, Արագած, Մասին — Արարատ:

Ոյժմ են աւերակ՝ ոտից խիստ կոխան,

Բոյնք են բոլորով թաշնոց՝ դաղանաց,

Կսվում է միշտ սուզ, սուզ այրիական

Կական մրամօր՝ թախիք սպազգեաց:

Ու՞ր իմ պաշտելի գետերի խոխոչք,

Ու՞ր իմ առուակաց անոյշ խշխըչոց.

Ու՞ր մարգագետնոց սչխարք եւ որոչք,

Ան զետափանց ծածանմունք ծառոց:

Ու՞ր իմ սրտոտ Հայկ, Արմենակ, Արամ,

Ու՞ր իմ ողջախոհ Արայ գեղեցիկ,

Ու՞ր քաջ Տիգրաններս, Պարոյր եւ Վահրամ.

Որովք խընդում էր սրտիկս հանդարտիկ:

Կնչոյէս չեմ յիշում, Արշակ, Վաղարշակ,

Վ են Արտաշէմներ, Խոսրով եւ Տրյամ,

Հեռատես Արգար հոգւով վառունակ,

Հումկու ախոյեան քաջարին Սմբատ:

Ու՞ր իմ պատանեակ աշխոյժ Գարեղին,

Խնկելի Վարդանս վեր հոգի անրիծ.

Ու՞ր իմ Վահաններս, Արտէն սիրազին՝

Եւ սուրբ Ղեւոնդեանը՝ Յավաշի անմկոյց:

Ու՞ր իմ սուրբ կրօնիս պաշտպան հարագատ,

Գրիգոր անձնազո՞ն նոր այգույս մշակ,

Խորէն յոդիացան, Յնան բազմուշխատ,

Մերուպ բաղմերախոն՝ Ներսէս՝ Խսահակ:

Ու՞ր իմ ողորմած երկաթ Աշոտներ,

Անվախ Գաղիկներ եւ վեհանձն Մուշեղ.

Եւ ուր Ռուբէններ, ամբադու Լեւոններ,

Որոց նեա կորեան տունս բազմազել:

Մնայ արդէն ինձ միակ յոյս վառաց —

Միածնաթշեան Տեղին Մրութեակ

Գահակալ նորին գեն Տէր մեծ շնորհաց,  
Որ պահում անուանս յատկութեանց նշան:

Անա իմ վիճակ՝ դառնաղէտ վիճակ,  
Երկինք գթառատ գթա ինձ սիրով.  
Կըտրել է շունչս, — ջունիլ ես հաղագ.  
Ինձ միայն մնայ պարկել ընդ հողով:

Տարբէր ինձ տարբէր շիրիմս իմ որդւոց,

Այն տեղ թող ննջեմ մինչեւ առաւօտ,

Նոցա սուրբ ոսկերք լցնելու յիմ ծոց,

Զըմնապ սրտիս հայրական կարօտ:

Անա գերեզման մահու գերեզման,  
Ուր պիտի նանգիմ անփարատ ցաւով.  
Անա իմ ողջոյն՝ ողջոյն հրաժարման,  
Որը թողում եմ երկնային յուսով:

Վազան ռազանոթ Տէր Յազանեկանութ,

ՅԵՐԵՒԱՆ, Է ԿՐԵԴ.

## ԱԶԳԱՅԻՆ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ.

Վենետիկ. — Հայոց Եկեղեցի. — Ռափայէլեան  
ուսումնարան. — Ս. Ղազարու վանք:

Մի Հայ մարդ հեռանալով իւր Հայ-  
րենիքից դէս ի տրեւմուեան Եւրոպա  
ճանապարհորդութեան նպատակով՝  
սկզբում կարծում է թէ՝ երկար ժա-  
մանակ ոչինչ չոլիտի տեսնէ այն տեղ՝  
որը յիշեցնէր իւր ազգը: Բայց յետոյ  
որչափ ապշած եւ միսիթարուած է լի-  
նում նա՝ երբ տեսնում է Համարեա  
ամենայն քայլափոխում; ամեն մի փոքր  
ի շատէ նշանաւոր քաղաքի մէջ, իւր  
ազգի անցեալ եւ ներկայ կեանքի այս  
կամ այն տեսակ յիշատակները — ե-

կեղեցի, աղօթատուն, արձանագրու-  
թիւնք, ձեռագիր մատեանք, վաճառա-  
կանք, եւլն, եւլն, Եւ այս կողմից մեր  
ազգը կազմում է մի զարմանալի բա-  
ցառութիւն իւր հարեւան Ասիացի աղ-  
գերի մէջ. մինչդեռ ոչինչ հետք եւ նշան  
չկայ գո. Պարսից, Վրաց, Տաճկաց պատ-  
մական կեանքից, Հայոց ազգը ամենայն  
տեղ թողած ունի իւր յիշատակները:  
Եւ այնուհետեւ կան մարդիկ՝ մերայինք  
կամ մանաւանդ օտարականք՝ որք ծա-  
նօթ չկինելով մեր ազգի պատմութեան  
հետ՝ վատահանում են ասել եւ կըրկ-  
նել թէ Հայոց ազգը միշտ եղել է մի  
չնին՝ աննշան՝ ընդհանուր պատմու-  
թեան ասպարիզի վերայ ապարդիւն  
ազգ . . . .

Վենետիկը այն բազմաթիւ Եւրոպա-  
կան քաղաքներից մէկն է՝ ուր կան Հա-  
յոց ազգի բազմաթիւ յիշատակներ:  
Ամենեցունց յայտնի թէ ուրպիսի լայն  
քաղաքական եւ առեւտրական յարա-  
բերութիւնք կային միջին դարերում  
մեր կիլիկիայի թագաւորութեան եւ  
Վենետիկեան հասարակապետութեան  
մէջ: Յետ անկման մեր թագաւորու-  
թեան՝ թէ եւ քաղաքական յարաբերու-  
թիւնքը դադարեցան՝ բայց առեւտրա-  
կանը միշտ շարունակվում էր անընդ-  
հատ: Տասնեւլիցերորդ եւ տասնեւ-  
եօթներորդ դարում այնչափ շատացան  
Հայ վաճառականք Վենետիկի քաղա-  
քում՝ որ Հարկաւոր եղաւ հաստատել  
Հայկական Եկեղեցի: Այդ Եկեղեցին  
պահպանուել է մինչեւ այժմ եւ գը-  
տանվում է քաղաքի կեղրոնատեղում՝  
սուրբ Մարկոսի հրապարակից ոչ հե-